

Երեւանի No. 206 ձեռագրում, որը 1318 թուականից է, սիմաքեան տարբերակը լուսանցքից անցել է բնագրի մէջ՝ փոխարինելով նախկին ընթերցմանը, իսկ վերջինս դուրս է բերուել լուսանցքի վրայ (էջ 131բ)։ Հաւանաբար կը պատահէն այսպիսի ուրիշ ձեռագրեր եւս։

Սրանք են սիմաքեան նորայայտ տարբերակի կենսագրական գծերը՝ հայկական գրչագրերում։

Հովիւուդ, ապրիլ 1982 թ.

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ
1801—1850*

* Հմմտ. Դաւթեան Հայկ. Հայ Գիրքը 1801—1850 թուականներին, Մատենագիտութիւն։ Երեւան 1967։ Իբրեւ խորագիր դրած ենք տպագրութեան տարին, տպագրութեան վայրը, Վիեննական Միֆարեան Մատենադարանի գրահամարը։ Շարուածքի մեծութեան մէջ նկատի չէ առնուած իջակալութիւնը եւ յաջորդ էջի նախալանկը։

1801

1801 — Կ. ՊՈԼԻՍ — Ա/991 եւ Է/123

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԻՆ ՍՐԲՈՅ ԴԱԻԹԻ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԻԻ ՀՈԳԵՆՈՒԱԳ ԵՐԳՈՅՆ ԻՄԱՍՏԻՅ, ՆԱԽ՝ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ՉԱՆԱՋԱՆՈՒԹԻՒՆ ԻԻՐԱՔԱՆՉԻՐՈՅՆ ԴՅՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ։ Տես Դաւթեանի թիւ 10ը։

Մեր երկու օրինակներն ալ նոյն տարուան տպագրութիւններ են, սակայն, որքան կ'երեւի, նոյն տարուան մէջ գործու ենեցած է կըրկին տպագրութիւն։ Տարբերութիւններն են. էջ՝ 4՝ տարբեր պատկերներ, էջ 18, 19, 22, 23, 26, 27, 30, 31՝ կը պակսին Է/123ի մէջ սողադարձի նախալանկերը։

1803

1803 — ՌՄԾԲ — Կ. ՊՈԼԻՍ — Բ/302

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՈՐ ԿՈՉԻ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔ ԵՒ ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ՝ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏԻՆՈՅ ԵՒ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ։

Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Դաւթի Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Թէոդորոսի Երջանկափայլ Վարդապետի։

Վեհափառ Հրամանաւ Մեծի Արքայանիստ Մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսի Սրբազան Պատրիարքի Տեառն Յօհաննու Աստուածաբան կոչեցեալ վսեմարան Բարունապետին։

Ի Թուին Հայոց՝ ՌՄԾԲ Սեպ. Թ., Ի Տըպարանի Յօհաննիսեան Պօղոսի։

Էջ՝ 263։ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7.5×12.5, զարդարուն շրջանակի մէջ։ ՊԱՏԱԿԵՐ՝ էջ 2։ ՃԱԿԱՏԱԶԱՐԳ՝ էջ 3, 61, 77, 90, 135, 164, 184, 225, 253։ ՎԵՐՋԱԶԱՐԳ՝ էջ 60, 163, 183, 262։ ՀՐԵՇՏԱԿԱԳԻՐ—ՄԱՐԳԱԳԻՐ՝ էջ 3, 61, 77, 90, 135, 164, 184, 225, 253։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊՈՂԻ Էջ 263՝ Շնորհիւ եւ ողորմութեամբն... յանկ էլեալ աւարտեցաւ սպունն պատմութեան գրքոյս, որ կոչի՝ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔ։ Ա՛րդ՝ ո՞վ բարեմիտ ընթերցող սորին. ի հանդիպիլն ձեր սոյնոյ գրքեկանս յիշեալի՛ք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս, զծերունի հայրն իմ զՏիրացու Յօհաննէսն, եւ զիս զորդի նորին զՏիրացու Պօղոսս՝ հանդերձ բարեջան եւ բաշ(զ)մաշխատաւ որդւովք իմովք Տիրացու Աստուածատուրիւ եւ Տիրացու Գէորգաւ, որք շարեցին զէրբս կապարեայս։ Յիշեալիք եւ զմշական գործարանիս՝ զԲալուցի Աւետիսն եւ զՄեբաստացի Մկրտիչն, եւ զուրք յիշ.։

1803 — ԱՆՅԱՅՏ — ԺԱ/1115

(ՍԱՂՄՈՒՔ ԴԱԻԹԻ) Մեր օրինակին մէջ կը պակսի տիտղոսաբերքը, եւ էջեր՝ 1—2, 15—18, 31—32, 215—218, 241—242, 255—256։

Էջ՝ 330։ ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8.5×12.5 զարդարուն շրջանակի մէջ։ ՊԱՏԱԿԵՐՆԵՐ՝ էջ 34, 72, 112, 146, 184, 254։ ՃԱԿԱՏԱԶԱՐԳ՝ էջ 3, 35, 73, 113, 147, 185, 219։ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ՝ էջ 3, 35, 113,

147: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 71: ԹՈՒՉՆԱԳԻՐ-
ՀՐԵՇՏԱԿԱԳՐԵՐ՝ էջ 3, 6, 10, 13, 20, 23,
28, 35, 39, 44, 49, 52, 57, 60, 65, 73, 77,
83, 87, 92, 97, 102, 106, 113, 117, 121,
125, 129, 133, 137, 141, 147, 152, 156, 163,
168, 173, 177, 181, 185, 190, 194, 197, 200,
204, 211, 219, 223, 227, 232, 236, 247, 251,
252, 259, 263, 267, 270, 276, 281, 284, 287,
288, 292, 295, 297, 300, 306, 308, 310, 322,
330:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 330՝ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ՏԿԱԳՐՈՂԻՍ: Բարեխօսութեամբ Սրբոյն
Գրիգորը մերոյ Լուսաւորչին յանկ էլեալ
աւարտեցաւ սպումն սաղմոսիս ՌՄԾԲ Մար-
տի ԻԸ: Արդեամբ Իսմայիլիչի հանդուցեալ
Պօղոսի որդի բարեպաշտօն Մալխաս աղայի,
որ ի նեստրա գետահայեաց նորաչէն Գրիգորի
պօղ քաղաքի բնակեցելոյ: Չեռամբ հարա-
գատի եւ հաւատարիմ սպասաւորի իւրոյ՝
Երեւանցի Յօհանի որդի Իսմայիլիչի Բարսղի:
Արդ մինչ մատուցանէք սովաւ զպաշտօն
օրհնարանութեան ձերոյ առ Բարձրեան Աս-
տուած՝ յիշեսջիք ի մաքուր մաղթանս ձեր
զվերորդեալ Մալխաս Աղայն եւ զհարազատն
իւր զԲարսեղն ընդ հոգեւոր եւ մարմնաւոր
ծնողօք իւրեանց...:

1804

1804 — ՄԱԴՐԱՍ — ԺԶ/661

ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻ ՊԱՏՃԱՌ:

Թարգմանեալ ի զանազան մատենից
պարսկացոց յումեմնէ բանասիրէ առ ի
յօդուտ նորավարժից մանկանց Հայոց:

Վերստին սրբազրեալ աշխատութեամբ
Մարիամ Յակոբ, Ոհաննէս Տէր Յակոբեանց
կոչեցելոյ:

Ի Հայրապետութեան Տեառն Դաւթի
Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Եւ յԱռաջնորդութեան Սրբոյ Ամենայ-
փրկչի Վանին որ ի Նորն Զուղայ Տեառն Յա-
րութիւն Արհի Եպիսկոպոսին:

Որոյ Նուիրակ է աստ Սուրբ Ամենա-
փրկչի Վանին մերոյ Տեառն Կիրակոս Աս-
տուածարան Վարդապետն յամի Տեառն 1804
Նոյեմբերի 1:

Ի Հնդիկս, ի Մայրաքաղաքն Մաղրաս,
ի Տպարանի Տէր Յարութիւն Շմաւօնեան
Շիրազեցոյ:

ԷԶՔ՝ 138: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
8.5×12.5: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 55, 63, 137:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 138՝ Ի աւարտ տետ-
րակիս ծերացեալ սպարանն մեր՝ ոչ մոռա-
նայ յիշատակօք զերախտիս երախտաւորացն
իւր սյսինքն, Պարոն Խաչիկ Ծատուր Զա-
րիֆեան, Սարկաւազ Յակոբ Աղազարեանն,
Պարոն Պետրոս Ոհաննէսեան Շիրազեցի, եւ
Պարոն Կոստանդ Թէոդորոսեան բնակեալ ի
Աժտրխան, նարդիս սակաւ աշխատող Սի-
մէոն Մկրտումեանն Ծմբղեանց Շիրազեցի:

1806

1806 — ՌՄԾԵ — Կ. ՊՈԼԻՍ — Բ/361

ՏԵՏՐԱԿ Ս ԱՅՍ ՈՐ ԿՈՉԻ ՔԱՂԱՔԱՎԱ-
ՐՈՒԹԻՒՆ:

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն
էջմիածնի Տեառն Դաւթի Սրբազան Կաթո-
ղիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Աթոռոյն
Երուսաղէմի Տեառն Թէոդորոսի Արհի Եպիս-
կոպոսին:

Տպագրեցեալ Վեհափառ Հրամանաւ Ար-
քայանիստ Մայրաքաղաքիս Կոստանդնու-
պօլսի Սրբազան Պատրիարքի Տեառն Յօհան-
նու Աստուածարան կոչեցեալ վսեմարան Բա-
րուսապետին:

Ի Թուականին ՌՄԾԵ, ի Կոստանդնու-
պօլիս, ի Տպարանի Յօհաննիսեան Պօղոսի:

ԷԶՔ՝ 47: ԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
7.5×15.5, գարդարուն շրջանակի մէջ: ՊԱՏ-
ԿԵՐ՝ էջ 2: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3: ԶԱՐԴԱ-
ԳԻՐ՝ էջ 3:

1806 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/768

ՕՐԱՅՈՅՅ 1806 ԱՄԻ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԵ-
ՐՈՅՍ ՌՄԾԵ:

Որ ցուցանէ զՏօնս եւ զՊահս ըստ կար-
գադրութեան Մօրս մերոյ Սրբոյ Եկեղեցոյ:

Այլեւ զերեւելի աւուրս այլոց ազգաց
ըստ իւրաքանչիւր սոմարաց:

Իսկ զծնունդս եւ զըրուժս Լուսնի ըստ
աստեղաբաշխից, սակայն յերեկոյէ յերեկոյ
24 ժամ թուելով:

Բայց զամսամուտս Տաճկաց՝ ըստ Ղուր՝

րէնամէին իւրեանց, որպէս ցուցանի ի վեր-
ջոյ:

Տպեալ Հրամանաւ Տեառն Յովհաննու
Արհի Եպիսկոպոսի Աստուածարան Վարդա-
պետի եւ քաջաքարոզ Պատրիարքի:

Ի Կոստանդնուպօլիս, ի Մատթէոս Դպրէ:

ԷԶՔ՝ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
6.0×10.0: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝
էջ 5: ԿԵՆԴՐՈՆԱԶԱՐԴ՝ էջ 1: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝
էջ 3, 40, 41: ՇՐՁԱՆԱԿ-ի մէջ առնուած էն
էջեր՝ 1, 44, 46, 47:

1808

1808 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/769

ՕՐԱՅՈՅՅ 1808 ԱՄԻ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԵՐՈՅՍ
ՌՄԾԵ:

Մնացածը ըստ ամենայնի նոյն 1806ի հը-
րատարակութեան հետ:

ԷԶՔ՝ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
5.7×10.5: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝
էջ 5: ԿԵՆԴՐՈՆԱԶԱՐԴ՝ էջ 1: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝
էջ 14, 19, 29: ՇՐՁԱՆԱԿ-ի մէջ առնուած էն
էջեր՝ 1, 44, 46, 47:

1809

1809 — ՄԱԴՐԱՍ — ԺԲ/334

ՆՈՐ ՏԵՏՐԱԿ ԱՅՐՈՒԲԵՆԱԿԱՆ, ՀԱՏՈՐ
ԵՐԿՐՈՐԴ:

Յորում բովանդակին՝ կանոն մի վանկեալ
Սաղմոս, եւ այլ զանազան օգտակար բանք՝
առակք՝ եւ ոտանաւորք՝ քաղուածոյք եւ
թարգմանեալք յայլ ազգաց:

ՅԼնորութեան ի հայրապետութիւն քրիս-
տոսահին սրբոյ Աթոռոյն էջմիածնի ամենից
Հայոց՝ Տեառն Եփրեմ շնորհազարդ Արք
Եպիսկոպոսի, եւ նարդեկիս զերզգօն Առաջ-
նորդի ամենայն Հայոց՝ որք ի Ռուսաստան:

Եւ ի Առաջնորդութեան Սրբոյ Ամենա-
փրկչի վանին Տեառն Յարութիւն Արք Եպիս-
կոպոսի եւ քալ հովուի մերոյ որ ի Զուղայ:

Յամի Տեառն 1809, եւ ի Թուին Հայոց
1257:

Արդեամբք եւ ծախիւք Պարոն Սարգիս
Ծատուր Աղայվալեանց կոչեցելոյ, եւ ի նորին
իսկ նորահաստատ սպարանի որ ի Մաղրաս:

ԷԶՔ՝ 6+128: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
14×10: ՊԱՏԿԵՐ՝ ընդմէջ 6/1՝ «Նկար

իսկապէս ձեւով փորագրի տոհմ Աղայվալեան
Սարգիս Ծատուրի 1809»: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝
էջ 1, 81, 113: ԲՆԱԳԻՐՆԵՐԸ ԻՐԱՐՄԵ ԲԱԺ-
ՆՈՂ ԶԱՐԴ՝ էջ 21, 24, 25, 40, 48, 51, 54,
58, 65, 68, 70, 71, 76, 77, 78, 84, 86, 97,
112, 123: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 8, 13, 14, 23,
81, 91, 96, 112, 128: Ամէն գլուխ կը սկսի
ԶԱՐԴԱԳԻՐ-ով: Էջ 128էն ետք հաւանաբար
ունեցած է նաեւ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մը, որ
այսօր ինկած է:

1811

1811 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/771

ՕՐԱՅՈՅՅ 1811 ԱՄԻ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԵՐՈՅՍ
ՌՄԿ:

Որ ցուցանէ ... Եւն. նոյն 1806ի տը-
պագրութեան հետ, կը տարբերի միայն:

Բայց զաւուրս ամսոցն Տաճկաց ի ծննդե-
նէ լուսնի 12 ժամ անցանելոյ զինի մեկ թուե-
լով:

Տպեալ մշտնջենական Հրամանադրով
Տեառն Զաքարիայ Սրբազան Պատրիարքի եւ
համահաճութեամբ եւ կնքով Յաջորդացն
իւրոց Սրբազան Պատրիարգաց:

ԷԶՔ՝ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
6.0×10.3: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝
էջ 5: ԿԵՆԴՐՈՆԱԶԱՐԴ՝ էջ 1: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝
էջ 38: ՇՐՁԱՆԱԿ-ի մէջ առնուած էջեր՝ 1,
42, 43:

1812

1812 — MDCCCXII — PARIS — A/229

NOTICE DE DEUX MANUSCRITS AR-
MÉNIENS CONTENANT L'HISTOIRE DE
MATHIEU ERETZ; ET EXTRAIT DE CETTE
HISTOIRE, RELATIF À LA PREMIÈRE
CROISADE, EN ARMÉNIEN ET EN FRAN-
ÇOIS. PAR M. CHAHAN DE CIRBIED.

A Paris, de l'Imprimerie Impériale.
MDCCCXII.

ԷԶ 58՝ ԵԼՔ ԼՍՏԻՆԱՅԻՈՅ ՅԱՐԵՒԵԼԷՍ,
ԸՍՏ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՄԱՆ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԷՍԻ:

Հանեալ ի պատմական զրուածոց Մատ-
թէոսի Երեցու Ուրհայեցոյ՝ որ պահի ի Կայ-
սերական Գրաստան Փարիզոյ:

Ի լյս ընծայեալ սրբազրութեամբ եւ
ճանօթութեամբք ի վերայ բնագրին, եւ

Թարգմանութեամբ ի դաղղիական լեզու, ի Յակովբայ Շահանայ Զրպետեան Եղեսացոյ, ի դասատու Վարժապետէ Հայկազեան Բարբառոյ ի Դպրոցի Արեւելեան Լեզուաց ի նոյն Գրատան:

Էջ՝ 92: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 7x18: Էջ 2ի վրայ՝ Extrait du Tome IX. des Notices et Extraits des Manuscrits de la Bibliothèque impériale et autres Bibliothèques.

1812 — Կ. ՊՈԼԻՍ — Ժ/1386

Տիտղոսաբերբը կը պակսի:

ՄՈՒՃԷՊԻՆՃԷ ԱՄԷԼ ՕԼՈՒՆՈՒՊ ՄԻՆԱՍԽԻԼԱՖԻՆԷ ՀԱՐԷՔԷԹՏԷՆ ՀԱԶԻՐ ՎԷԻՃԹԻՆԱՊ ՕԼՈՒՆԱՅ:

Տէյիւ՝ պալատի խաթըը հիւմայնիւ չէվքէթ մաքրուն իլէ մունավէն ֆէրմանը ալիւշան սուրէթիտիբ քի այնի իլէ մահալինտէն նազլ օլունմուշուր:

Էջ՝ 32: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 6.7x12: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ Էջ 1: ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴ՝ 1: ԶԱՐԴԱԳԻՐ՝ Էջ 1:

Վերջաւորութեան էջ 32 կ'առնենք բուականը. Թահրիրէն՝ Փի էվայիլի շէհրի մուհարրէմիւլ հէրամ, սէնէի սէման՝ վէ աչրէյն՝ վէ միէթէյն՝ վէ էլֆ: Պիմէդամի Գոսթանթանիյէ էլ մահրուսէ:

1812 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/772

ՕՐԱՅՈՅՅ 1812 ԱՄԻ ՏԵՍՈՒՆ ԵՒ ՄԵՐՈՅՍ ՌՄԿԱ:

Որ ցուցանէ ... մնացածը նոյն 1811ի տպագրութեան հետ, միայն կ'աւելցուի Պատրիարքի յիշատակութեան հոտ:

Եւ որ ի ներկայումս, ըստ նոյն տնտեսողի զազգս՝ Տեառն Յովհաննու Արհի Եպիսկոպոսի Աստուածաբան Վարդապետի եւ քաջաբարոզ Պատրիարքի:

Էջ՝ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 5.8x10.5: ՊԱՏԿԵՐ՝ Էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ Էջ 5: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ 38: ՇՐՁԱՆԱԿԻ մէջ առնուած էն էջեր՝ 1, 42, 43:

1812 — ՄԱԴՐԱՍ — ԺԱ/1105

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՈՒԱՆ ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍՍԱՐՈՍԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ՆԵՐՀՈՒՆ ՎՈԼՏԵՐԱՅ ԳԱՂՂԻՍՅԻՈՅ:

Ի մերս վերածեալ հայկական բարբառ ի Պարոն Յակոբայ Նազար Շամբեան, յանդիւրական բնագրէ, ի դրօսանս ընթերցասէր պատանեկացն մերազնէից:

Ի Հայրապետութեան Տեառն Եփրեմի Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Ի Մազրաս, ի Տպարանի Երկոցունց հարազատացն Պարոնաց Յակոբայ եւ Յովսէփայ Նազար Շամբեանց, 1812:

Էջ՝ ԺԴ+1+99: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 7x11.5: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ Էջ ԺԴ, 28, 57:

1813

1813 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/773

ՕՐԱՅՈՅՅ 1813 ԱՄԻ ՏԵՍՈՒՆ ԵՒ ՀԱՅՈՅ ՌՄԿԱ:

Որ ցուցանէ զտօնս եւ զպահս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ:

Եւս եւ զամիսս Ազարիայի եւ զերեւելի տօնս եւ զամիսս Լատինաց, Յունաց, Տաճկաց եւ Հրէից:

Այլեւ զընթացս լուսնի եւ արեւու հաշուեալ ըստ սովորութեան արեւելականաց, վերածեալ ի 41 աստիճան եւ մի մասն աշխարհազրական լայնութեան Կոստանդնուպօլսի:

Տպեալ վեհափառ հրամանաւ Տեառն Յօհաննու Աստուածաբան Պատրիարքի:

Խորհրդով եւ հաւանութեամբ Աստուածասէր եւ զերապայծառ Իշխանապետաց ի Կոստանդնուպօլսի: Կենդրոնագարդիմ մէջ Աստուածամօր պատկերին տակ՝ «Ի ՄայրՊապաստան»: Ապա՝ ի Տպարանի Սուրբ Աստուածածնի:

Էջ՝ 48: Մեր օրինակին մէջ կը պակսի՞ն էջեր՝ 13—36: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 6x9.5: ՊԱՏԿԵՐ՝ Էջ 2ի եւ 3ի միջեւ: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ Էջ 3, 6, 10, 38, 41: ԿԵՆԴՐՈՆԱԶԱՐԴ՝ Էջ 1: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ Էջ 12, 45: ՇՐՁԱՆԱԿԻ մէջ առնուած է էջ 1ը միայն:

1813 — ԿԱԼԿԱԹԱ — ԺԲ/306

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ:

Ասացեալ Սբ. Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչին: Յորում պարունակին ճառք յողնապատուք քսան եւ երեք: Վասն անհաս էութեանն Աստուծոյ, եւ խնամոցն՝ եւ սիրոյն որ առ ստեղծուածս: Եւ վարուց ուղղութեան՝ եւ գործոցն հատուցման:

Առաջին տպագրումն գրքոյս եղեալ է ի Կոստանդնուպօլսի քաղաքի ի Թուին Հայոց 1186:

Իսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբք եւ ծախիւք ի Քրիստոս հանդուցեալ Աղայ Սարգիս Տէր Յովհաննէսեանին, եւ յատուկ օգնական լինողաց մեր Ազնէից:

Աշխատասիրութեամբն Ջընթլում Աւետեանին:

Ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Եփրեմի ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Յամի Տեառն 1813, ի Կալկաթայ, ի Տըպարանի Աւետ Ջընթլումեանի:

Էջ՝ Ե+324: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 9.5x15.8: ՊԱՏԿԵՐ՝ Էջ 1էն առաջ: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ Էջ 1: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ Էջ Բ. 46, 276, 297, 309: ԶԱՐԴԱԳԻՐՆԵՐ՝ քռչնագիր եւ մարդագիր՝ էջ Ա, Գ, 1, 4, 19, 23, 33, 47, 58, 68, 78, 91, 107, 132, 142, 153, 157, 164, 169, 174, 181, 191, 210, 212, 216, 231, 234, 235, 277, 297, 298, 310, 323:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Էջ Գ.՝ Օժանդակութեամբ եւ շնորհիւ ... յիշեալիք ի մաքուր յաղօթս ձեր՝ Օժանդակքն գործարանիս իմոյ ... նաեւ յիշեալիք ... զպատճառ տպագրութեան սորին՝ ի Քրիստոս հանդուցեալ Աղայ Սարգիս Տէր Յովհաննիսեանն, եւ կենդանի զհաւատարիմ կողակիցն իւր յարգոյապատիւ Տիկին Մարամջանն եւ անդրանիկ ժառանգն իւր՝ յարգելի Աղայ Յովհաննէս Սարգսեան, եւ պատուելի կողակից նորին՝ Տիկին Եղիսաբեթ Յովհաննէսեանն, ընդ նմին եւ զերեսին հարազատ որդիքսն Աղայ Սարգսին՝ Աղայք Կարապետ, Բէկտան, եւ Մարտիրոսն, եւ ի Քրիստոս հանդուցեալ Աղայ Մկրտիչ Սարգսեանին եւ զայլ համայն ընտանեաց, եւ արեան առու մերձաւորացն:

Սոքա են անուանք Ազնիւ Պարոնացն որք են օժանդակք ծախուցն Տպարանիս՝

Յովհաննէս Սարգիս եւ Կումպանի Կարապետ Ծատուրեան Սիմոն եւ Գէորդ Փանոս Բաղրամեան Ստեփաննոս եւ Պաղոս Կարապետ Ծատուրեան Ներսէս Յովհաննէս եւ Ստեփաննոս Ներսէսեան

Կարապետ Մկրտիչ Մուրատեան Թաքէոս Յովհաննէսեան Յովսէփ Էմինեան Զաքարիայ Յովհաննէս եւ Միքայէլ Զաքարայ Երրիսուեան

Աւետիկ Սէթեան Յովսէփ Եփրեմեան Մարգար Զօրէրեան Սարգիս Յովհաննէսեան Խաչիկ Յարութիւնեան Սահակ Մօսէս Ծմայօնեան Յարութիւն Յովսէփ Քամալեան Անտօն Բարիկեան Ծատուր Աւաքեան Մէլքում Մանուկեան Գէորդ Աստուածատրեան Կարապետ Խաչիկ Նիազեան Գրիգոր, Ղազար եւ Յովհաննէս Սէթեան Նիկողայոս Յարութիւնեան

Հուսկ յետոյ ի վախճանի յիշեալիք զաշխատաւոր գործարանիս յետեալ ծառայն ձեր Ջընթլում Աւետեանս՝ որ հարազատօրէն աշխատութեամբ տքնիմ ի այս գործ (ուստի եւ հայցեմ եթէ սխալանք ուրեք գտանիցին ի սմա հայելով զմիայնակութիւն եւ զճանրութիւն պաշտօնի իմոյ ներումն շնորհեսջիք), այլ եւ մի զանց առնիցէք յիշել զանդրանիկ որդեակն իմ, եւ զտէր տպարանիս՝ Աւետ Ջընթլումեանն, զոր պատանեակ հասակաւ իւրով՝ ոչ սակաւ աշխատի ի վերայ սոյն այս գործոյ, ընդ նմին եւ զայլ մասնակից աշխատաւորս յիշման արժանի առնելով՝ դուք սիրելիքդ իմ, վարձս բարեաց պարգեւողէն ընկալիք ... Եւ ես մընամ ձերում Յարութեանն միշտ պատրաստական եւ ամենախոնարհ ծառայ՝ Ջընթլում Աւետեան:

1813 — ԿԱԼԿԱԹԱ — ԺԱ/1087

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅ ՍՈՂՈՎՄՈՆԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ:

Առաջին տպագրումն գրոյս եղեալ է ի Վէնէտիկ յամի Տեառն 1789:

Իսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբ եւ ծախիւք ի Քրիստոս հանդուցեալ Ազայ Սարգիս Տէր Յովհաննէսեանին եւ յատուկ օգնական լինողաց մեր Ազնէից :

Ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Եփրեմի ամենայն Հայոց Կաթուղիկոսի :

Աշխատասիրութեամբն Ջընթլում Աւետեանին :

Յամի Տեառն 1813, ի Կալկաթայ, ի Տըպարանի Աւետ Ջընթլումեանի :

Էջ.Ք. ԺԱ. +240: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6.2x11.8: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 21, 217, 221, 227: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 216, 219, 226: ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ էջ Ա, Թ, 1:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ Թ՝ Ողորմութեամբ եւ շնորհիւ . . . աւարտեցաւ տպագրումն . . . արդեամբ եւ ծախիւք բարի առիթ արանցս այսոցիկ ազնուաց, (զորոց անուանս զբողմեալ եմ ի ներքոյ) . . . յիշման արժանի առնել խնդրեմ արդեամբ եւ ծախիւք օժանդակքն Գործարանիս մերոյ հանդերձ կենդանեօք եւ հանդուցելովքն: Նաեւ յիշեցիք ի մաքուր յազօթս ձեր՝ զարժանի յիշեցման զպատճառ տպագրութեան սորին՝ ի Քրիստոս հանդուցեալ ազայ Սարգիս Տէր Յովհաննիսեանն, եւ կենդանի զհաւատարիմ կողակիցն իւր, յարգոյապատիւ տիկին Մարիամջանն եւ անդրանիկ ժառանգն իւր՝ յարգելի ազայ Յովհաննէս Սարգսեանն եւ պատուելի Կողակից նորին տիկին Եղիսաբեթ Յովհաննէսեանն, ընդ նմին եւ զերեսին հարազատ որդիսն ազայ Սարգսին, ազայք՝ Կարապետ, Բէկտանն եւ Մարտիրոսին, եւ ի Քրիստոս հանդուցեալ ազայ Մկրտիչ Սարգսեանին եւ զայլ համայն ընտանեաց եւ արեան առու մերձաւորացն :

Այսօրքիւք են անուանք ազնիւ Պարոնայցն որք են օժանդակք Տպարանիս ծախուցն՝

- Յովհաննէս Սարգիս եւ Կումպանի Կարապետ Ծատուրեան
- Սիմէոն եւ Գեւորդ Փանոս Բաղրամեան
- Ստեփաննոս եւ Պաղոս Կարապետեան
- Ներսէս Յովաննէս եւ Ստեփաննոս Ներսէսեան
- Կարապետ Մկրտիչ Մուրատեան
- Թաղէոս Յովհաննէսեան
- Տէր Յովսէփ Ստեփաննոսեան
- Յովսէփ Էմինեան

- Չաքարիայ եւ Միքայէլ Շիրիսուեան Աւետիկ Սէթեան
- Մարգար Զօրէրեան
- Սարգիս Յովհաննէսեան
- Խաչիկ Յարութիւնեան
- Սահակ Մօսէս Շմայօնեան
- Յարութիւն Յովսէփ Քամալեան
- Անտօն Բարիկեան
- Յովսէփ Եփրեմեան
- Ծատուր Աւաքեան
- Մէլքում Մանուկեան
- Կարապետ Խաչիկ Նիսիզեան
- Ղազար եւ Յովհաննէս Սէթեան
- Նիկողայոս Յարութիւնեան

Հուսկ յետոյ ի վախճանի յիշեալիք զաշխատաւոր զործարանիս յետնեալ ծառայն ձեր Ջընթլում Աւետեանս, որ հարազատօրէն աշխատութեամբ տքնիմ ի այս գործ. (ուստի եւ հայցեմ եթէ սխալանք ուրեք գտանիցին ի սմա հայելով զմիայնակութիւն եւ զձանրութիւն պաշտօնի իմոյ ներուսն շնորհեալիք) այլ եւ ոչ զանց առնիցէք յիշել զանդրանիկ որդեակն իմ, եւ զտէր Տպարանիս՝ Աւետ Ջընթլումեանն, զոր պատանեակ հասակաւ իւրով ոչ սակաւ աշխատի ի վերայ սոյն այս գործոյ: Եւ ես մնամ ամենախոնարհ ծառայ Ջընթլում Աւետեան:

1814

1814 — ՎԵՆԵՏԻԿ — ԺԲ/580ա

ԿԱՐԳ ԶՈՐՔՈՏԱՆԵԱՅ: ՏԵՏՐԱԿ Գ: ՃԻՊՕՆ: Տիտղոսաքերքը կը պակսի, լրացուած է ձեռագրով:

Էջ.Ք. 21—28: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7x12.7: ՊԱՏԿԵՐ՝ էջ 21էն առաջ:

1814 — ՎԵՆԵՏԻԿ — ԺԲ/580բ

ԿԱՐԳ ԶՈՐՔՈՏԱՆԵԱՅ: ՏԵՏՐԱԿ Գ: ԲԱՔԻՑ: Տիտղոսաքերք չունի, մեր օրինակը նախորդին հետ միասին կազմուած է, սակայն առանձին հատոր մը կ'երեւի, որովհետեւ էջ 28ի տակը տողադարձի նախալանկ չունի, եւ էջ 29ը կը սկսի նոր պրակահամարով: Այս նոյն հատորին մէջ էջ 33 կը սկսի՝ «ՅԻՊԻՊՈՍ ԵՒ ՄԱԿՕԴ ԿԱՄ ՄԱԿՕ» խորագրով նոր գլուխ մը, որ յայտնի է քէ նախորդին շարունակութիւնն է, քանի որ էջ 32ի տակը տողադարձի նախալանկ դրուած է:

Էջ.Ք. 29—36: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7x12.7: ՊԱՏԿԵՐ՝ էջ 29էն առաջ:

1814 — ՌՄԿԳ — Կ. ՊՈԼԻՍ — Տ/327

ԱԶԻԶ ՎԷ ԱԶԻՄ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՇԷՀՐԻՆԻՆ, ՎԷ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԷՖԷՆՏԻՄԻԶԻՆ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԱՀԱԼԼԻՐԻՆԻՆ ՐԻՎԱՅԷԹԻ ՔԻԹԱՊԻ:

Էրմէնիան ՌՄԿԳ թարիխինտէ:

Էջ.Ք. 372: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10.5x15 գարդարուն շրջանակի մէջ: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2, 7, 8: ԽՈՐԱՆ՝ էջ 1: ԼՈՒՍԱՆՅԱՐՈՒՄ՝ 9: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 9, 315: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ 35, 39, 169, 172, 181, 195, 207, 213, 218, 222, 238, 260, 266, 270, 288, 302, 303, 314, 320, 321, 325, 332, 356, 361, 368: ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ էջ 3, 9, 21, 31, 36, 40, 51, 53, 59, 61, 63, 65, 69, 73, 74, 87, 89, 91, 95, 146, 148, 149, 151, 152, 153, 158, 161, 163, 165, 170, 172, 173, 174, 175, 176, 177, 180, 181, 182, 183, 185, 190, 192, 193, 196, 199, 203, 204, 206, 207, 208, 209, 212, 213, 214, 215, 216, 217, 219, 220, 221, 223, 224, 228, 229, 232, 235, 236, 239, 241, 242, 244, 245, 247, 249, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 261, 262, 265, 266, 267, 268, 271, 274, 275, 277, 279, 281, 283, 289, 290, 293, 296, 297, 298, 299, 303, 304, 316, 317, 319, 321, 322, 324, 326, 327, 333, 338, 344, 349, 351, 352, 354, 357, 362, 363, 365, 366, 369:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 369՝ Թանկերինն լուծֆելիէ՛ եւ զայն զայրէթքէ՛ Հաննա տէնիլէն երուսաղէմի Յօհաննէս վարդապետ Սուրբ Յակոբ վանդիւնին սալիս սատիք խառիմի՝ էսկի զէման բալիլէրին եազալիլէրինտէն պիր պիր տէվլիլիւ ճէմիթմէկիլէ, պու՛ շէրիֆ շէհիր ազիլ Երուսաղէմին վէ հուտուտինտէ պուլունան միւլարէք տնօրինական զիեարէթկեա՛ զէմիլիլէրին վէ զայրի տախի լազիմ կէլէճէք մահալլէրին, վէ հէմ պիլգէ պիլմէք լայիլ սէզա օլան նէսնէլէրին բէվայէթլէրինն ինհա իտէն զիթապի՛ նէվճէտիտ թէլլիֆ իլլէտի: Վէ պու՛ պիրքազ սէպէպիլէ . . . Պու ճիհէթտէն եֆէնտիլիլին 1814 սէնէսինտէ Սուրբ Էջմիածինտէ ճէմիէրմէնի միլլէթինէ Սրբազան Եփրեմ հայրապետին կաթուղիկոսիլիլ զէմանինտէ. Վէ Սուրբ Երուսաղէմտէ՛ Թէոֆորոս Արհի եպիս-

կոպոսին Պատրիարքիլիլ զազթինտէ. Վէ Ստամպուլտէ Արբահամ Երանաչնորս Արհի եպիսկոպոսին Պատրիարքիլիլինն թարիխինտէ՛ Գայսէրի նահիլլէսի Թալաս զարիլլէսինտէն՝ օլ ազիլ մէմլէքէթէ վէ ճէմի տնօրինական մահալլէրէ զայէթ իշթիլլազիլլէ թէննի վէ շիտտէթլի մուհապպէթիլլէ աշիլլ օլան Գայսէրի զազապինտէն՝ սապիք Թալասիլլ Հալեա Ստամպուլտա սազին Ապտալեան Յակոբ օղլու թուղլաճի Կարապետ աղա վէ օղլու Աւետիք աղա վէ Հասքէօլլիլ թուղլաճի Պօղոս աղա: Երինէ սապիք Թալասիլլ Հալեա Ստամպուլտա սազին մահտեսի Մինաս օղլու զիլլէմիտճի Գրիգոր աղա. երինէ Հալեա Թալասիլլ Փէհլիլվան օղլու զիլլէմիտճի մահտեսի Առաքել աղա. պու բարեպաշտօն պիր զազ զիմսէլէր իլլատմիլլէ, պու՛ անլէրտէն իլլալ իտէն փէրտէի զալլորուլ աշմազ միւրատ իտիւլ Ասիթանէտէ Պալաթ մահալլինտէ միլլէթ մէքթէպիլլտէ խառիմ Ասլանեան Թազուր վարժապետէ թէրճումէ իթտիրտիլլէր. տէկիլլ թէրճումէ, համան իլլա սայ զի զանդիմիլլին իլլաիլլապինն նազար իտէրէք ճէմիտէն թէլլիլլիֆ: Վէ մէրգում իւննէլիլլայիլլ վէ սէպէպ էրմէնի լիսանինն աշնա օլմայան զիմսէնին եանինտէ պաթիլլէ վարմասին, իլլա անճաք զի զահլիլ կէլլին տէկիլլ. քէնտի էմվալ վէ հէլալ վարլէրինտէն մասրուֆ իթմէկիլլէ՛ երինէ օ՛ մահալլտէ Մատթէոս տէպիլլէ ստամբա տախի իթտիրտիլլէր պու մէզպուր Փազիլլէր . . . :

1814° — ԿԱԼԿԱԹԱ — ԻԲ/751

(ԳԻՐՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ, ԸՆԴ ՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻ ՊԱՇՏՕՆ ԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆՊԱՏՈՒՄ ՊԱՐԳԵՒԱՅՆ): Մեր օրինակին մէջ կը պակսի տիտղոսաքերքը, եւ առած ենք 1759ին Ջմիւռնիլոյ տպագրութիւնն:

Էջ.Ք. Ը+54, բայց ետեւէն կը պակսին առ նուազն 1 կամ 2 քուլքեր եւս: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7x11.5: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 1: ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ էջ Ա, Զ, 1, 52:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ Զ՝ Յիշատակարան նոր: Օժանդակութեամբ եւ շնորհիւ Ամէնեանուհւոյ Կուսին Մարիամու, յանգ ելեալ՝ աւարտեցաւ տպագրումն փոքրիկ մատենիս մեկնութեան պաշտօնից աստուածային ան-

պատում պարզեցան: Առաջին տպագրումն զբոսն եղեալ էր ի Յիզմիր քաղաքին ի թուին Հայոց 1208: Իսկ այժմ վերստին տպագրեցաւ ի Կալկաթայ քաղաքիս արդեամբ եւ ծախիւք, զուարթամիտ եւ առատաձեռն աղբիս մերոյ, որք յանուանէ յիշեցեալ կան ի ներքոյ՝

- Կարապետ Մկրտիչ Մուրատեան
- Աւետ Աղարէզեան
- Մէլքում Մանուկեան
- Յարութիւն Պետրոսեան
- Մարտիրոս Տէր Ստեփաննոսեան
- Սարգիս Յովանեան
- Սահակ Սովետ Շմայնեան
- Սարգիս Յովհանէս Սարգսեան
- Իմին եւ Միքայէլ Յովսէփ Իմինեան
- Մանուէլ Պետրոս Գէրաբեան
- Մէլքում Յարութիւն Մէլքումեան
- Յովհաննէս Յարութիւն Աղանուրեանց
- Կարապետ Յովհաննէս Պետրոսեան
- Գէորգ եւ Մկրտիչ Զորաբեան
- Մկրտիչ Յարութիւն Աղանուրեանց
- Աւետիկ Նազար Շահնազարեան
- Գրիգոր, Ղազար եւ Յովհաննէս Սէթեան
- Գարուէլ Էվազ Գրիգորեան
- Գէորգ Աստուածատրեան

Արդ զտուրս սիրելի ազգիդ իմոյ՝ եւ զուարթամիտ ձեռնտուութիւն յայս զործ ազգօգուտ ինքնակամ օգնողացն... Եւ ես մընամ ձերում Յարգութեանն միշտ պատրաստական եւ Ամենից խոնարհ Յառայ՝ Ջընթում Աւետեան:

1814 — ԿԱԼԿԱԹԱՅ — ԺԳ/608

ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ Ի ՁԵՌՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՎ ՅՈՒՍՈՎ ԵՒ ՀԱՒԱՏՈՎ ՊԱՀՕՔ ԱՂՕԹԻՒՔ ԵՒ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ:

- Մասամբ ի մի վայր ժողովեալ
- Գրչայգիրն աւարտ է գ(լ)եալ
- Երկու ամօք յառաջ սկըսեալ
- Աշխատութեամբ ջանիւք տըքնեալ
- Աւետ Մարտիրոսն կոչեցեալ
- Արդեամբ եւ ծախիւք հանդ ելեալ:

Ի Հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ Սրբոյ Էջմիածնայ իջի Տեառն Եփրեմ Սրբազան Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Յամի Տեառն 1814, ի Կալկաթայ, ի Տըպարանի Աւետ Ջընթումեանի:

Էջ. Ժ + 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6.2x11: ՊԱՏԿԵՐ՝ էջ Ժ եւ 1-ի միջեւ, 14/15: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 4, 39: ՋԱՐԴԱԳԻՐ՝ էջ ա, ը, 1, 5, 8, 11, 14, 22, 33, 40, 45:

1816

1816 — Կ. ՊՈԼԻՍ — Տ/600

ՊՈՒ ԳԻՐՔ ՕԼ ՏՈՒՐ ՔԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԱՄԲԸՄԸՍ ԻԳԹԻՉԱԼԸ ԿԵՐԷՔ ՕԼԱՆ ՊԻՐ ԳԱՉ ԷՕՅՐԷՆԻԼԷՃԷՔԼԷՐ՝ ՀԱՅՅՈՒՄՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՂԲԱՅՐԼԱՐԸՄԸ ԻՉԻՆ ԹԻՒՐՔՃԷ ՇԱՐԱԳՐԵԼ ՕԼՈՒՆՏՈՒ, ՎԷ ԱՏԸՆԸ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏԷՏԻՔ:

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն եւ Տեառն Եփրեմի Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Թէոփրոսի ճգնազգեաց Արք Եպիսկոպոսի:

Վեհափառ հրամանաւ Տեառն Պօղոսի Սրբազան Արհի Եպիսկոպոսի՝ բարեջան եւ ազգասէր Պատրիարքի թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ:

Ի Տպարանի Յօհաննիսեան Պօղոսի ի Քիւրքճի Խանն, 1816, ի Կոստանդնուպօլսոյ:

Էջ. Ժ 170: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8.4x13.4 զարդարուն շրջանակի մէջ: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 170:

1817

1817 — ՎԵՆԵՏԻԱ — Բ/779

SUFFRAGIA VIRORUM IN THEOLOGICA FACULTATE CLARISSIMORUM DE JOANNIS PHILOSOPHI OZNIENSIS ARMENORUM PATRIARCHAE ORATIONE CONTRA PHANTASTICOS EX ARMENO LATINE REDDITA, TYPISQUE MANDATA VENETIIS IN MONASTERIO S. LAZARI ANNO 1816.

1817, Venetiis, in Monasterio S. Lazari.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻՅ ՅԱՂԱԳՍ ՃԱՌԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՕԶՆԵՅԻՈՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՅ, ՈՐ Ի ՀԱՅ ԲՆԱԳՐԷ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԼԱՏԻՆ ԼԵՉՈՒ, ԵՒ ՏՊԱԳՐԵԱԼ Ի ՎԵՆԷՏԻԱ Ի ՎԱՆՍՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1816:

Էջ. Ժ 55: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8.5x15: Կազմուած է 1816ի հրատարակութեան հետ, տես անդ թիւ՝ 245:

1817 — Կ. ՊՈԼԻՍ — ԺՁ/774

ՕՐԱՅՈՅՅ 1817 ԱՄԻ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԵՐՈՅՈՒՄԿ:

Որ ցուցանէ ... նոյն 1812ի տպագրութեան հետ: Կը տարբերի միայն՝

Վեհափառ հրամանաւ Տեառն Պօղոսի հանճարապետ Արհի Եպիսկոպոսի, Աստուածաբան Վարդապետի եւ բազմերախ Պատրիարքի Անդրեանուպօլսեցոյ:

Էջ. Ժ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6x10.2: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 5: ՇՐՁԱՆԱԿ-ի մէջ առնուած են էջեր՝ 1, 46, 47:

1818

1818 — ՎԵՆԵՏԻԱ — Տ/164

ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵՒՏԻ ԽՈՅՈՒ ԻԻՉԷՐԻՆԷ ՍՈՒՐԲ ՔԻԹԱՊԼԱՐՏԱՆ ՏԷՎՇԻՐԻԼՄԻՇ ՄՈՒԽԹԱՍԱՐ ՏՈՒԱԼԱՐ:

Մեծաւորըն իզնի իլէ պամա օլունմուշ տուր:

Վէնէտիք չէհրնտէ, Սուրբ Ղազար Մանասթըրտա, 1818:

Էջ. Ժ 107: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 5.8x10.8: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2: ԿՆՆԴՐՈՆԱԶԱՐԴ՝ էջ 1: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 9: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 107:

1820

1820 — Կ. ՊՈԼԻՍ — Տ/139

ՊՈՒ ԳԻՐՔ ՕԼ ՏՈՒՐ ՔԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԸՄԸՍ ԻԳԹԻՉԱԼԸ ԿԵՐԷՔ ՕԼԱՆ ՊԻՐ ԳԱՉ ԷՕՅՐԷՆԻԼԷՃԷՔԼԷՐ՝ ՀԱՅՅՈՒՄՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՂԲԱՅՐԼԱՐԸՄԸ ԻՉԻՆ ԹԻՒՐՔՃԷ ՇԱՐԱԳՐԵԼ ՕԼՈՒՆ՝

ՏՈՒ, ՎԷ ԱՏԸՆԸ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏԷՏԻՔ:

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն եւ Տեառն Եփրեմի Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Գարբէլի ճգնազգեաց Արք Եպիսկոպոսի:

Հրամանաւ Տեառն Պօղոսի Արք Եպիսկոպոսի՝ բարեջան եւ ազգասէր Պատրիարքի:

Ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիսցոյ, որ ի Քիւրքճի Խանն, 1820, ի Կոստանդնուպօլսոյ:

Էջ. Ժ 170: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8x13.5 զարդարուն շրջանակի մէջ: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3, 39: ՎԵՐՁԱԶԱՐԴ՝ էջ 170: ՀՐԵՇՏԱԿԱԳԻՐ-ԹՈՒՉՆԱԳԻՐ՝ էջ 3, 39:

1822

1822 — Կ. ՊՈԼԻՍ — Բ/1212

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՅ ԱՍՏՅԵԱԼ Ի ՆԱԽՆԻ ՍՐԲՈՅ ՀԱՐՅ՝ ՅՈՒՂԱՓԱՒ ԵՒ ՅԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ:

Վերստին տպեալ Վեհափառ հրամանաւ Տեառն Պօղոսի արժանընտիր Արք Եպիսկոպոսի եւ բազմերախ Պատրիարքի Անդրեանուպօլսեցոյ:

Յամի Տեառն 1822 Յունիս 20: Ի Կոստանդնուպօլսոյ: Ի Տպարանի Մայր Սուրբ Աստուածածնի:

Էջ. Ժ 191+1: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 5x6.5:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԷՋ 190՝ Շնորհիւ եւ ողորմութեամբ ... տպեցաւ զբոսն ի յայտնումն աղօթասէր անձանց օրհնեալ Ազգիս Հայկազնոյ Արդեամբ Պատրիարքանիս Մայր Եկեղեցոյս: Ի միւթեւէլիութեան Աստուածասէր Սառաֆ Պաղտասար Աղայեան: Մահտեսի Մարտիրոս յարգելի ամիրայի Ապուլէիսցոյ: Մեծափափաք ինդրանօք Տէր Պետրոսեան Եկեղեցական մահտեսի Յօհաննէս բարեջան ծառայի, որ ի վաղուց ըզմայր վերստին ի տիպ արձանացուցանել զսա: Արդ՝ ջերմեանդութեամբ վայելողը ըսա, յիշեսջիք ի մաքուր աղօթս ձեր զգրոգրեալ յարգելիսն, եւ զտպող սորին զՍրբազան

Պատրիարքի յետին ծառայ Անդրէաս Վարդապետ Ակնեցի . եւ զաշխատաւորս զործարանիս զԽումարդատեան զբաշար Տիրացու Մարտիրոսն . զՏիրացու Մանուէլն Բրուտ Մարուքէեան եւ զՏիրացու Յարութիւնն Տէր Ատեփանեան , զի եւ զուրբ յիշեալ լինիլիք . . . :

1823

1823 — Կ. ՊՈԼԻՍ — Ա/373 եւ Բ/101

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՍԸՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ, ԵՒ ՂԵՒՈՆԴԵԱՆՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ :

Համեմատէ Դաւթեանի Թիւ 434ը (էջ 111) : Գործս նոյն տարուան մէջ ունեցած է կրկին տպագրութիւն, կամ գոնէ տխտղասաքերը տպուած է երկու անգամ :

Տարբերութիւններ, Տխտղասաքերի մէջ՝ Ա/373՝ Անդրի — անուպօլսեցւոյ Բ/101՝ Անդ — բիանուպօլսեցւոյ

Ա/373՝ Նարինեան Ակ — նեցւոյ Բ/101՝ Նարինեան — Ակնեցւոյ

Ա/373՝ Տպագրութեան տարին կը պակսի Բ/101՝ 1823 . ՌՄ՝ ՀԲ :

Ա/373ը սկզբնականը կ'երեւի , Բ/101ը տպագրութեան միջոցին կամ երկրորդ տպագրութեան ատեն սրբագրուած :

1824

1824 — ՄԻՋԱԳԻՒԴ — Դ/1310

ՆԱՐԵԿ ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ ՀՈԳԵԿԻՐ ՀՈՒՆՏՈՐԻ :

Բաշխեալ յինսուն եւ հինգ բանս՝ հոգետուն մաղթանաց : Նորապէս սրբագրեալ՝ համեմատութեամբ հնագոյն եւ ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց :

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն եւ Տեառն Եփրեմի Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց :

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի Արքեպիսկոպոսի :

Իսկ ի Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի՝ ազգասէր եւ բարեջան Արքեպիսկոպոսի :

Ի Տպարանս Արապեան Պօղոսի Ապուլէիսցւոյ , եւ երկոյ որդւոց իմոց՝ Աստուածատրոյ Գէորգայ եւ Գալուստի : (1824) որ ի Քիւրքճի Խանն , եւ կամ ի Միջագիւղն :

Էջ.Ք՝ Ա+410 : ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11×16 .5 զարդարուն շրջանակի մէջ : ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 1, 347 : ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ՝ էջ 1 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 12, 61, 64, 85, 113, 145, 161, 178, 214, 246, 662, 275, 297, 302, 306, 346 : ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ էջ 1, 347 :

1826

1826 — ՀՌՈՄ — Տ/441

ԹԻՃԵՔԻԻԻՐԼԷՐ ՅԻՄՆԱԿ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ԿԻՒՆԻՒՆՏԷՆ ՊԷՕՅԻԻՔ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԿԻՒՆԻՒՆԷՏԷՔ ԹԱԽՍԻՍ ՕԼՈՒՆՄՈՒՇՏՈՒՐԼԱՐ ՔՕԼԱՅԼԸՔ ԻՉԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԱ ՅԱՐԶ ՕԼԱՆԸ ՄԻԻԼՀԱԶԱ ԷՏԷՐԷՔ ՃԱՆԼԱՐԸՆԸՆ ՍԷԼԱՄԷԹԻՆԻ ՍԱՀԻՀԼԷՏԻՐՄԷՔ ՄԻԻՐԱՏ ԷՏԷՆԼԷՐԷ ՃԻԼՏԻ ԷՎՎԷԼ , ԵԱԶԼԸՏԸ . . .

Պատմա օլուենուու Հոռմատա , Բրորականտա պատմահանէսինտէ , Մեծաւորլարըն իրքնիլէ , սէնէ 1826 :

Էջ.Ք՝ 36+632 : ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7 .1×13 .3 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 6, 261, 289, 313, 325, 350, 353, 364, 496, 508, 550, 602, 625, 632 :

1826 — ՄԻՋԱԳԻՒԴ — Բ/1095

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱԻԹԻ :

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն եւ Տեառն Եփրեմի Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց :

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի ճգնազգեաց Արքեպիսկոպոսին :

Եւ ի Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի Աստուածաբան՝ Արքեպիսկոպոսի :

Ի Տպարանի Արապեան Պօղոսի Ապուլէիսցւոյ , եւ երկոյ որդւոց իմոց՝ Աստուածատրոյ , Գէորգայ եւ Գալուստի : 1826 որ ի Քիւրքճի Խանն եւ կամ ի Միջագիւղն :

Էջ.Ք՝ 338+6 : Ամէն էջ զարդարուն շրջանակի մէջ առնուած՝ 8 .2×13 .2 : ՊԱՏԿԵՐ՝ էջ 2, 38, 78, 122, 160, 202, 238, 276 : ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3, 39, 79, 123, 161, 203, 239, 277 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 159, 201, 281, 315, 324 : ՄԱՐԴԱԳԻՐ՝ ՀՐԵՇՏԱԿԱԳԻՐ՝ էջ 3, 39, 123, 203 : ԹՌՉՆԱԳԻՐ՝ էջ 79, 161, 277 :

1826 — Կ. ՊՈԼԻՍ — ԺՁ/775

ՕՐԱՅՈՅՅ 1826 ԱՄԻ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԵՐՈՅՍ ՌՄՀԵ : Այս խորագիրը կ'առնենք 1817ի տպագրութեան հետեւելով , որովհետեւ մեր օրինակին մէջ կը պակսին 1, 2, 39, 40, 47, 48 էջերը :

Էջ.Ք՝ 48 : ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6×10 : ՊԱՏԿԵՐ՝ էջ 4 : ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 5 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 11 : ՇՐՋԱՆԱԿ՝ մէջ առնուած է էջ 46ը :

1827

1827 — Կ. ՊՈԼԻՍ — Ա/641

ԿՈՆԴԱԿ ՀԱՐՍԱՆԵԱՅ :

Բարեկարգ կանոնադրութեամբ սահմանեալ Ամենապատիւ եւ Վեհափառ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Կարապետի Սրբազան Արքեպիսկոպոսի :

Յօդուու հասարակութեան թագաւորեալ մայրաքաղաքիս :

Կամօք եւ հաւանութեամբ Ազգային Ժողովոյ՝ Եկեղեցականաց եւ Աշխարհականաց :

Ի լոյս ընծայեալ՝ Ի Տպարանի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ Սուրբ Աստուածածնի : Յամի Տեառն 1827 Սեպ. Ա. :

Կողմի շապիկին արտաքին երեսին վրայ առջեւը՝ ԿՈՆԴԱԿ ՀԱՐՍԱՆԵԱՅ , Սահմանեալ Ազգային Ժողովով :

Ետեւի կոնակը՝ Տպեալ ի Կոստանդնուպօլիս : Յամի 1827 ի Սեպտեմբերի 1 :

Էջ.Ք՝ 1+29 : ԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7×11 .5 : ԿՈՂՔԵՐԸ զարդարուն շրջանակի մէջ 7 .5×12 .5 : ՊԱՏԿԵՐ՝ էջ 2 : ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 29 : Կարապետ Պատրիարքի կնիքը՝ էջ 3 եւ 29 :

1827 — Կ. ՊՈԼԻՍ — ՅՈՒՑ/1

ՍԱՂՄՈՍ ԴԱԻԹԻ , ՈՐ Է ԱՂՕԹՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ :

Տպեալ ի Պատրիարքութեան թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի ամենապատիւ եւ վեհափառ Արքեպիսկոպոսի :

1827 յՕրթագիւղ ՌՄՀԶ , ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիսցւոյ :

Էջ՝ 333, մեր օրինակէն կը պակսին էջեր՝ 127—128, 233—272 : ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ շրջանակով միասին՝ 7 .9×12 .3 : ՊԱՏԿԵՐ՝ էջ 2, 36, 74, 116, 152, 192, 226 : Ամէն էջ գծաւոր շրջանակի մէջ առնուած է , տխտղասաքերը՝ զարդարուն շրջանակ ունի : ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3, 37, 75, 117, 153, 193, 227 : ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 190 :

1827 — ԿԱԼԿԱԹԱ — ԺԴ/531

(ԱՂՕԹՔՄԱՏՈՅՅ : ԾԱՂԿԱՔԱՂ . . .) Հմմտ . համար 576, էջ 149, ուր նշանակուած է ՔԷ գիրքը կը վերջանայ 127 էջով : Մեր օրինակը այդ էջէն ետք , առանց նոր տխտղասաքերի , կը սկսի՝

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ , էջ 129—193, էջ 194ին վրայ կը կարդանք՝ Առ ի ընչոյ զպարապ տեղիս՝ եղաք բան ինչ յաղաքս Երուսանց , թարգմանեալ ի յԱնգլիացւոյ լեզուէ ի հայ բարբառ , ի Պարոն Գրիգորէ Խաղարեանց կոչեցելոյ : Բնագիրը այս էջով կէս կը մնայ , որովհետեւ կը պակսին յաջորդ 1 կամ 2 քուղքեր եւս :

Մեր օրինակին մէջ կը պակսին գլխաւոր տխտղասաքերը՝ ա/բ , եւ էջեր՝ 73—74, 195—196 :

1828

1828 — Կ. ՊՈԼԻՍ — ԺՁ/776

ՕՐԱՅՈՅՅ

Որ ցուցանէ զտօնս եւ զպահս ըստ բարուր կարգաւորութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ :

Եւս եւ զամիսս եւ զերեւելի տօնս եւ զպահս Յունաց , Լատինացւոց , Տաճկաց եւ Հրէից եւ զամիսս Ազարիայի :

Այլեւ զընթացս լուսնի եւ արեւու՝ հաշուեալ յերեկոյէ ըստ սովորութեան Նահանգին Կոստանդնուպօլսոյ , որոյ աշխարհազրական լայնութիւնն է 41 աստիճան եւ 1 մասն : Հրամանաւ ամենապատիւ եւ վեհափառ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի :

1828 Տպագրեալ ՌՄՀԷ , ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիսցւոյ :

Իսկ կողմին վրայ՝ առջեւն ու ետեւը նոյնը՝ ՏՕՆԱՅՈՅՑ ԱՄԻ ՏԵՍՈՒՆ 1828, ՌՄ ՀԷ, ՏՊԵԱԼ ՅՕՐԹԱԳԻԻՂ :

ԷջՔ՝ 56+4: Կարն յանգաւոր ոտանաւորներ տպուած են նաեւ կողմերու ներքին երեսներուն վրայ: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6.2x9.5: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4ի եւ 5ի միջեւ: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 1: Զարդարուն շքանակի մէջ առնուած են կողմերը, եւ էջ 1ը: Ետեւի էջ 1ի վրայ դրուած է ցուցակ մը՝ «Յանկ Գրոց տպագրելոց ի Կոստանդնուպօլիս, ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիցոյ», յառաջ կը բերուին 44 տիտղոս: Երկրորդ ցանկ մըն ալ կայ ետեւի էջ 4ի վրայ՝ «Գրեանք տպագրելաք ի Հասանփաշայ Սանն, արդեամբ մեծահաւատ Մահտեսի Արրահամ Ամիրայի Ակնեցոյ»: Հոս ալ յառաջ կը բերուի 9 անուն:

1828 — ՄԱԼԹԱ — Տ/541

ՊԻՐ ԵՆՆԻ ԵԻՒՐԷՔ՝ ԶՕՃՈՒՂԱ ԷՆ ԷՅԻ ՇԷՅ ՏԻՐ :

«Կէլին՝ եա չօճուղար՝ իշխտին պանա. վէ Բապալինին զօրդուսունու էօյրէտէյիմ սիդէ»: Զէպ. 33. 11:

Մալթա, 1828:

ԷջՔ՝ 20 եւ կողմին վրայ: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8x13.7: ՊԱՏԿԵՐ՝ էջ 1 եւ կողմի առաջին երես, իբրեւ ԿԵՆԴՐՈՆԱԶԱՐԴ:

1828 — ՄԱԼԹԱ — Տ/469

ՔԻԻԶԻԻՔ ՀԷՆՐԻ ՎԷ ՔԷՆՏԻ ՀԱՄԱԼԸՆԸՆ ՆԱԳԼԻՅԷԹԻ :

Հիչ օգո՞ւմամբ ըմբռնե՞ր՝ ջի մագսոմլարըն վէ էմէնլէրին աղղընտան տուզտիւն մէհահի: Մատթէ. 21. 16:

Մալթա, 1828:

ԷջՔ՝ 68: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8x13.7: ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԴ՝ էջ 1:

1829

1829 — Կ. ՊՈԼԻՍ — ԺԶ/777

ՕՐԱՅՈՅՑ

Որ ցուցանէ ... նոյն 1828ի տպագրութեան հետ, կը տարբերի միայն տարբերը:

1828 Տպագրեալ ՌՄ ՀԷ: Նոյնպէս է նաեւ կողքը, միայն քէ 1828ի տպագրութեան կողմին ներքին երեսին վրայ տպուած չափական ստանաւորը դրուած է առաջին եւ վերջին էջին կենդրոնը:

ԷջՔ՝ 48: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6x11.3: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 5, 8, 11, 14, 17, 19, 22, 25, 29, 32, 37, 41: ԶԱՐԴԱՐՈՒՆ ՇՐՋԱՆԱԿ-ի մէջ՝ կողմի արտաքին երկու երեսները եւ էջ 1:

1830

1830 — ՎԵՆԵՏԻԿ — Տ/159

ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵՒ ՏԻ ԽՈՅՈՒ ԻԻԶԻՐԻՆԷ ՍՈՒՐԲ ՔԻԹԱՊԼԱՐՏԱՆ ՏԷՎՇԻՐԻԼՄԻՇ ՄՈՒԽԹԱՍԱՐ ՏՈՒԱԼԱՐ :

Վէնէտիք շէհրինտէ, Սուրբ Ղազար Մահաթըրտա, 1830:

ԷջՔ՝ 95: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 6x11: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 9, 36, 42, 48, 58, 68, 87:

1830 — ՄԻՋԱԳԻԻԿ — Ա/1081

ԼԱՊՏԵՐ ՀՈԳԻՈՅ :

Ի Տէր Կարապետ Արք Եպիսկոպոսէ եւ Պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ:

Յօրինեալ ի յօդուտ Լուսաւորչածին օրհնեալ Ազգիս Հայոց:

Տպագրեալ երրորդ անգամ յաւելմամբ ինչ ինչ հարկաւորաց ի հեղինակէն: Յամի Տեառն 1830 Մարտի 26: Ի Միջազիւղ, ի Տըպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիցոյ:

Կողմին վրայ, առջեւը՝ ԼԱՊՏԵՐ ՀՈԳԻՈՅ, ի պէտս Քրիստոսասիրաց, 1830:

Ետեւի կողմ՝ Ի կրթութիւն ուղիղ Հաստոյ: Տպեալ ի Միջազիւղ, ՌՄ ՀԷ:

ԷջՔ՝ 70: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7x11.5: ՊԱՏԿԵՐ՝ էջ 4: Կողմի շապիկը զարդարուն շքանակի մէջ՝ 7.5x12:

1830 — ՌՄ ՀԷ — ՕՐԹԱԳԻԻԿ — Բ/366

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ :

Հոգեւորապ Դպրաց՝ Ժրաջան Պաշտօնէից Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ:

Հաստատեալ եւ տպեալ վերջստին բարձու հրամանաւ Ամենապատիւ եւ Վեհափառ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի:

1830 — ՌՄ ՀԷ, յՕՐԹԱԳԻԻԿ: Ի Տպարանի Պօղոսի Արապեան:

Կողմի արտաքին երեսին վրայ առջեւը՝ ԿՈՆԴԱԿ ԴՊՐԱՅ, Հաստատեալ Ազգային Ժողովով:

Կոնակի արտաքին երեսին վրայ՝ Տպեալ յՕՐԹԱԳԻԻԿ 1830 — ՌՄ ՀԷ, յՕԳՈՍՏՈՍԻ 19:

ԷջՔ՝ 16: ԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7x11.5: Կողմերը զարդարուն շքանակի մէջ՝ 7.5x12.3: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 2: Կարապետ Պատրիարքի կնիք՝ էջ 2:

1830 — ՌՄ ՀԷ — ՕՐԹԱԳԻԻԿ — Դ/420

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԻՆԶՊԷՍ ԿԸ ՀԱԻԱՏԱՅ ԵՒ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅՈՅ :

Այժմ ուսմական ոճով շարադրեցաւ նորահասակ մանկանց համար, որ հեշտ հասկընան ի Դպրատունն Օրթագիւղի:

Ի Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի Ամենապատիւ եւ Վեհափառ Արք Եպիսկոպոսի:

Տպեալ վերստին 1830 — ՌՄ ՀԷ ի յՕՐԹԱԳԻԻԿ, Ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուլէիցոյ:

ԷջՔ՝ 40: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 7.5x12.5: ՊԱՏԿԵՐ՝ էջ 2: ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ էջ 3: ՎԵՐՋԱԶԱՐԴ՝ էջ 40:

1830 — ԿԱԼԿԱԹԱ — ԻԳ/614Ե

ՃԱՌ Ի ՎԵՐԱՅ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ :

Ի Կալկաթա: Տպագրեալ ի գործատան Մարգասիրական ձեմարանին: 2000 Օրինակք: Ի Յունվարի 1830:

ԷջՔ՝ 16: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8.7x17:

1831

1831 — ԿԱԼԿԱԹԱ — ԻԳ/614Ե

ՃԱՌ Ի ՎԵՐԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ :

Ի Կալկաթա: Տպագրեալ ի գործատան Մարգասիրական ձեմարանին: 2000 Օրինակք: Յօգոստոսի 1831:

ԷջՔ՝ 20: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 9x16.5:

1831 — ԿԱԼԿԱԹԱ — Դ/260

MEDITATION ON OUR LORD'S PRAYER IN THE GARDEN OF GETHSEMANE. MISCELLANEOUS SERIES NO. 3.

ՄՏԱԾՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ԱՂՕԹԵԼՈՅՆ ՏԵՍՈՒՆ Ի ՊԱՐՏԻԶԻՆ :

Վերջին էջին (4) տակ՝ Կալկաթա, Տըպագրեալ ի գործատան Մկրտող Միսոնարաց 1831:

ԷջՔ՝ 4: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8x13.7: Առանձին տիտղոսաբերք չունի:

1831 — ԿԱԼԿԱԹԱ — Դ/260

A BRIEF EXPOSITION OF THE TEN COMMANDMENTS. MISCELLANEOUS SERIES NO. 4.

ՀԱՄԱՌՕՏ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՏԱՍՆ ՊԱՏԳԱՄԱՅՆ :

Վերջին էջին (12) տակը՝ Կալկաթա, Համառօտեալ: Տպագրեալ ի Գործատան Մկրտող Միսոնարաց 1831:

ԷջՔ՝ 12: ՇԱՐՈՒԱԾՔԻ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8x13.5: Առանձին տիտղոսաբերք չունի:

1831 — ԿԱԼԿԱԹԱ — Դ/260

MEDITATION ON A GODLY LIFE. MISCELLANEOUS SERIES NO. 5.

ՄՏԱԾՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՎԱՐՈՒՅ ԱՍՏՈՒԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ :

